ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4562-Ա

«13» հունիսի 2012 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺ ԽՄԲԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 57-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Երևանի քաղաքապետի 2012 թվականի ապրիլի 18-ի <<Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման մասին>> N 3310-Ա որոշումը՝

1. Հաստատել Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության ապահովման խնդիրների իրականացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության, ճարտարապետության և քաղաքաշինության, շինարարության և բարեկարգման, հանրակրթության, առողջապահության, տրանսպորտի վարչությունների պետերին և <<Երևաննախագիծ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել սույն որոշման հավելվածով նախատեսված, Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի քաղաքաշինական միջավայրում մատչելիության ապահովման խնդիրների իրականացման միջոցառումների կատարումը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության, տրանսպորտի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ